



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2011թ. նոյեմբերին /վերլուծություն/

2011թ. նոյեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 17009 գործարքներ, որոնց քանակը 2011թ. հոկտեմբերի համեմատ աճել է 6.7%-ով, իսկ 2010թ. նոյեմբերի համեմատ՝ 5.0%-ով:

2011թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2011թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4145 օտարման գործարքների 77.1%-ը կազմել են առուվաճառքները, 22.3%-ը՝ նվիրատվությունները և 0.6%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 37.7%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.8%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. նոյեմբերին, 2011թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 1.1%-ով, իսկ 2010թ. նոյեմբերի համեմատ աճել՝ 2.8%-ով:

2011թ. նոյեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.7%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. նոյեմբերին, 2011թ. հոկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.1%-ով, իսկ 2010թ. նոյեմբերի համեմատ նվազել՝ 3.8%-ով:

2011թ. նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	նոյեմբեր 2010թ.	նոյեմբեր 2011թ.	հոկտեմբեր 2011թ.
Կենտրոն	447600	452000	436100
Արաբկիր	362600	335300	342000
Քանաքեռ-Զեյթուն	279400	260800	265900
Նոր-Նորք	229300	232200	227700
Ավան	237100	242200	248900
Էրեբունի	244200	232900	226700
Ծենցավիթ	242400	232500	233400
Դավթաշեն	265000	257000	253000
Աջափնյակ	228500	232800	226500
Մալաթիա-Սեբաստիա	228400	220700	223100
Նուբարաշեն	149100	140100	140100
Միջինը Երևանում /բազի Նորք-մարաշից/	264900	258000	256700

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. նոյեմբերին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. հոկտեմբերի համեմատ, աճել են 0.5%-ով:

2011թ. նոյեմբերին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 351 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. հոկտեմբերի և 2010թ. նոյեմբերի համեմատ նվազել է 4.6%-ով:

2011թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2010թ.	նոյեմբեր 2011թ.	հոկտեմբեր 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	139800	121120	125600
	Ապարան	46000	52700	52700
	Թալին	57500	68100	66100
Արարատ	Արտաշատ	97100	94000	96200
	Մասիս	136100	111300	107800
	Վեդի	96500	93300	91200
	Արարատ	85300	78900	77200
Արմավիր	Վաղարշապատ	158500	139500	141200
	Արմավիր	126700	114800	112600
	Մեծամոր	84800	79600	76500
Գեղարքունիք	Սևան	94200	88600	90700
	Գավառ	48800	53600	54500
	Մարտունի	87500	92600	96400
	Վարդենիս	32300	33500	33500
	Ճամբարակ	20600	26600	25500

Լոռի	Վանաձոր	92300	84000	86700
	Ստեփանավան	59700	76600	74500
	Սպիտակ	83800	102200	97900
	Ալավերդի	33700	39400	38100
	Տաշիր	37200	51600	49300
	Թումանյան	6200	13300	13300
	Շամլուղ	3400	10200	9800
	Ախթալա	14400	24100	23100
Կոտայք	Աբովյան	150000	143300	143100
	Նոր Հաճն	133500	131100	126600
	Բյուրեղավան	105900	102100	104100
	Եղվարդ	109700	111400	114700
	Հրազդան	62700	60300	60700
	Ծաղկաձոր	177500	207800	201500
	Չարենցավան	77600	76900	73400
Շիրակ	Գյումրի	117700	104400	103300
	Արթիկ	63200	65200	63200
	Մարալիկ	30400	39200	37500
Սյունիք	Գորիս	139000	122400	118500
	Կապան	104600	95100	97100
	Սիսիան	84100	83400	86200
	Մեղրի	62000	74100	74100
	Ագարակ	34500	47200	45500
	Քաջարան	61600	71600	69100
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց Ձոր	Վայք	71900	82600	79700
	Եղնգնաձոր	110800	115100	110100
	Ջերմուկ	121200	111600	114000
Տավուշ	Դիլիջան	106100	98500	99700
	Իջևան	133000	119300	119800
	Բերդ	42200	56000	53500
	Նոյեմբերյան	34400	43300	43300
	Այրում	24200	31000	32000

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. հոկտեմբերի համեմատ, աճել են 0.8%-ով:

2011թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 507 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 126, մարզերում միասին վերցրած՝ 381: 2011թ. նոյեմբերին, 2011թ. հոկտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 6.7%-ով, ընդ որում Երևանում 15.6%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 4.1%-ով: 2010թ. նոյեմբերի համեմատ՝ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 10.5%-ով, ընդ որում Երևանում՝ 5.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 12.1%-ով:

2011թ. նոյեմբերին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները /դրամ/		
	նոյեմբեր 2010թ.	նոյեմբեր 2011թ.	հոկտեմբեր 2011թ.
Կենտրոն	477600	470000	455000
Արաբկիր	389500	372200	368000
Քանաքեռ Զեյթուն	293100	279800	276000
Նորք Մարաշ	279800	308300	300300

Ավան	250900	253200	257200
Էրևբունի	255400	237100	233000
Շենգավիթ	257600	242500	243500
Դավթաշեն	279500	269200	265000
Աջափնյակ	246300	242000	238000
Մալաթիա Սեբաստիա	244000	230000	233000
Նուբարաշեն	150900	144800	145800
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	284100	277200	274100

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. նոյեմբերին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. հոկտեմբերի համեմատ աճել են են 1.1%:

2011թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինագված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		նոյեմբեր 2010թ.	նոյեմբեր 2011թ.	հոկտեմբեր 2011թ.
Արագածոտն	Աշտարակ	145500	133349	130100
	Ապարան	49500	55100	55100
	Թալին	59400	72000	67000
Արարատ	Արտաշատ	101400	103400	102700
	Մասիս	139900	114200	113700
	Վեդի	101400	96200	95300
	Արարատ	90400	89100	88200
Արմավիր	Վաղարշապատ	166600	162000	168200
	Արմավիր	131300	117100	115100
Գեղարքունիք	Սևան	98800	94300	95000
	Գավառ	51900	47300	56600
	Մարտունի	90900	97200	97100
	Վարդենիս	35200	38500	38300
	Ճամբարակ	23300	28800	28400
Լոռի	Վանաձոր	99000	97000	98000
	Ստեփանավան	63500	79500	79100
	Սպիտակ	87300	109200	108000
	Ալավերդի	36600	40400	39600
	Տաշիր	40600	54200	54000
	Թումանյան	10800	13900	13900
	Շամլուղ	7500	11500	11500
	Ախթալա	18300	25200	24500
Կոտայք	Աթոլյան	166200	154100	150000
	Նոր Հաճն	137200	133200	132000
	Բյուրեղավան	109800	109300	109000
	Եղվարդ	118900	121300	120000
	Հրազդան	66600	67800	65000
	Ծաղկաձոր	318900	307800	309500
	Չարենցավան	81500	78200	75700
Շիրակ	Գյումրի	127400	118500	119700
	Արթիկ	65500	68100	67000
	Մարալիկ	32900	40200	39000

Սյունիք	Գորիս	144400	127100	126500
	Կապան	107100	100500	100900
	Սիսիան	87300	89100	89500
	Մեղրի	64300	76100	76200
	Ագարակ	35900	48200	46200
	Դաստակերտ	10500	10500	10500
Վայոց Ձոր	Վայք	75700	83800	82200
	Եղեգնաձոր	114900	119600	118500
	Ջերմուկ	123500	117200	117200
Տավուշ	Դիլիջան	111400	103200	105400
	Իջևան	138200	129700	129700
	Բերդ	44400	58500	57000
	Նոյեմբերյան	36200	46400	46000
	Այրում	26100	34800	33300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. նոյեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. հոկտեմբերի համեմատ, աճել են 0.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. նոյեմբերին հանրապետությունում օտարվել են 1348 միավոր /850.03 հա/ հողեր, որից Երևանում` 77 միավոր /5.32 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 751 միավոր /803.88 հա/, որից Երևանում` 4 միավոր /0.60 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 414 միավոր /35.54 հա/, որից Երևանում` 59 միավոր /4.20 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր` 143 միավոր /5.21 հա/, որից Երևանում` 12 միավոր /0.49 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր` 10 միավոր /0.90 հա/, որից Երևանում` 2 միավոր /0.05 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր` 17 միավոր /2.10 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր` 11 միավոր /2.10 հա/,
- ջրային հողեր` 2 միավոր /0.30 հա/:

2011թ. նոյեմբերին հանրապետությունում օտարված հողերից 1167 միավորի /777.77 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում` 65 միավոր /4.70 հա/, նվիրատվության գործարքներ` 167 միավորի /66.60 հա/, որից Երևանում` 10 միավոր /0.50 հա/ և փոխանակության գործարքներ` 14 միավորի /5.66 հա/, որից Երևանում` 2 միավոր /0.12 հա/:

Հանրապետությունում 2011թ. նոյեմբերին, 2010թ. նոյեմբերի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 10.0%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 7.3%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 29.3%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 66.7%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում` 283.79 հա, որից 278.38 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 22.1%-ը կամ 258 գործարքներ /124.06 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում` 16 գործարք /1.15 հա/, իսկ 77.1%-ը կամ 900 միավորը /620.46 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում` 49 միավոր /3.55 հա/: 2011թ. նոյեմբերին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 9 գործարք /33.25 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2011թ. նոյեմբերին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	0	0.00	10	0.97	6	0.18	2	0.45	2	0.05	39	2.75	6	0.31
Արագածոտն	10	5.50	4	0.37	0	0.00	6	0.92	55	44.83	0	0.00	24	3.17	1	0.07
Արարատ	19	28.18	0	0.00	8	0.41	4	0.01	71	63.21	1	0.08	53	4.65	9	0.23
Արմավիր	9	7.80	0	0.00	1	0.05	5	0.70	112	238.12	1	0.29	44	4.25	2	0.11
Գեղարքունիք	2	2.14	0	0.00	0	0.00	4	0.10	36	32.58	0	0.00	14	1.60	2	0.29
Լոռի	2	0.18	0	0.00	4	0.13	23	0.16	119	112.27	0	0.00	16	1.85	4	0.05
Կոտայք	15	35.34	1	0.09	14	0.64	17	0.58	68	27.02	0	0.00	72	6.26	12	0.11
Շիրակ	0	0.00	0	0.00	11	0.26	14	0.27	37	33.94	0	0.00	16	1.41	0	0.00
Սյունիք	6	7.24	0	0.00	1	0.01	3	0.13	24	27.29	0	0.00	2	0.25	0	0.00
Վայոց Ձոր	15	28.47	0	0.00	1	0.06	5	0.12	9	3.47	0	0.00	6	0.64	2	0.07
Տավուշ	2	1.03	0	0.00	5	0.27	7	0.06	19	5.45	1	0.02	12	0.73	3	0.11
Ընդամենը	80	115.88	5	0.46	55	2.80	94	3.23	552	588.63	5	0.44	298	27.56	41	1.35

Ստորև ներկայացվում է 2011թ. նոյեմբերին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը:

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	4	0.12	0	0.00	1	0.01	3	0.11	12	1.03	0	0.00	0	0.00	9	0.96	3	0.07
Արագածոտն	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	19	6.78	10	5.50	4	0.37	0	0.00	5	0.91
Արարատ	1	0.04	0	0.00	1	0.04	0	0.00	30	28.57	19	28.18	0	0.00	7	0.38	4	0.01
Արմավիր	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	13	8.33	8	7.58	0	0.00	1	0.05	4	0.70
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	6	2.24	2	2.14	0	0.00	0	0.00	4	0.10
Լոռի	3	0.03	0	0.00	0	0.00	3	0.03	25	0.39	1	0.12	0	0.00	4	0.13	20	0.14
Կոտայք	10	0.23	0	0.00	7	0.21	3	0.02	35	36.26	13	35.19	1	0.09	7	0.42	14	0.56
Շիրակ	9	0.11	0	0.00	5	0.07	4	0.04	16	0.41	0	0.00	0	0.00	6	0.18	10	0.23
Սյունիք	1	0.01	0	0.00	1	0.01	0	0.00	8	7.10	5	6.97	0	0.00	0	0.00	3	0.13
Վայոց Ձոր	1	0.002	0	0.00	0	0.00	1	0.002	20	28.65	15	28.47	0	0.00	1	0.06	4	0.12
Տավուշ	2	0.06	0	0.00	1	0.03	1	0.03	12	1.30	2	1.03	0	0.00	4	0.24	6	0.03
Ընդամենը	33	0.62	0	0.00	16	0.37	17	0.25	196	121.06	75	115.18	5	0.46	39	2.42	77	3.00

Հանրապետությունում 2011թ. նոյեմբերին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 5 գործարք /0.70 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. նոյեմբերին, 2010թ. նոյեմբերի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 11.0%-ով: Ընդ որում, Երևանում աճել է 12 անգամ, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել է 15.7%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 2.3

անգամ, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 69.3%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ աճել է 5.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 25.0%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	3	1.12	90.9	235.8	177.5	23	11.53	365.0	12000.0	4222.2
Ապարան						2	0.86	86.5	2727.3	675.5
Թալին	7	4.38	34.6	883.3	333.7	21	16.95	93.6	5494.5	553.6
Ծաղկահովիտ						6	14.12	79.5	1000.0	228.5
Արարատի մարզ										
Արտաշատ	14	17.50	311.0	1675.0	1171.4	23	45.21	335.1	10833.3	2537.6
Մասիս	5	10.68	98.3	357.5	188.8	23	6.45	200.0	11904.8	3000.0
Վեդի						25	11.55	207.0	10795.1	1681.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	5	2.91	77.1	122.7	103.1	58	41.76	294.3	9090.0	1586.0
Բաղրամյան	3	4.67	67.5	70.9	69.7	15	147.15	90.6	2561.1	734.2
Վաղարշապատ						38	48.98	444.4	11764.7	2834.1
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	1.15	199.8	1875.0	380.0
Ճամբարակ						7	8.94	60.5	953.3	325.0
Մարտունի						1	0.60	51.1	2850.0	710.0
Սևան	1	1.20	640.8	640.8	640.8	8	6.29	52.2	2134.8	310.0
Վարդենիս	1	0.94	460.0	460.0	460.0	19	15.60	41.2	2575.1	352.0
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.12	214.9	214.9	214.9	10	4.84	170.4	6424.2	716.0
Գուգարք						5	1.91	234.6	6065.9	795.0
Սպիտակ								250.0	5555.5	718.3
Ստեփանավան						7	5.19	90.6	1686.6	284.2
Տաշիր						7	3.75	45.3	1384.4	137.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	4	2.14	72.5	521.3	248.9	27	11.90	279.3	11942.7	4660.1
Եղվարդ	4	16.71	202.5	275.6	239.4	25	9.63	174.4	11971.8	2985.0
Հրազդան	5	16.35	326.1	1015.9	700.9	13	4.67	130.5	10256.4	2025.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						20	15.11	252.0	1693.1	582.7
Ամասիա								40.9	261.0	130.0
Անի						8	10.20	110.6	546.9	365.5
Աշոցք								58.5	215.8	118.0
Արթիկ						9	8.63	79.4	1428.6	362.3
Սյունիքի մարզ										
Գորիս								92.6	1023.2	681.5
Կապան	2	5.04	473.0	1135.8	804.4	1	0.07	120.0	841.6	328.2
Մեղրի	3	1.93	484.0	880.0	616.0	5	0.36	193.0	3000.0	710.0
Սիսիան						18	26.86	46.3	1977.4	478.0

վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	3	0.93	54.7	62.5	59.9	9	3.47	125.0	10000.0	1860.0
Վայք	12	27.54	68.9	170.0	115.9			58.8	1430.7	595.2
Տավուշի մարզ										
Բերդ						13	2.44	213.3	3783.8	665.2
Իջևան	2	1.03	157.5	929.4	543.5	3	0.29	267.5	9454.5	1218.6
Նոյեմբերյան						3	2.72	46.7	7368.4	815.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տնտեսագործությանից և հողատնտեսներից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						15	16006.0	130.7	22200.0	2572.6
Ապարան						5	10674.0	124.1	609.6	355.0
Թալին						1	1916.0	63.2	1454.8	152.3
Ծաղկահովիտ						2	1770.0	60.0	214.3	86.5
Արարատի մարզ										
Արտաշատ						10	7095.0	173.9	7140.3	894.0
Մասիս	7	3785.0	1951.1	1989.0	1974.5	33	26342.0	187.5	25000.0	1213.1
Վեդի						9	12411.0	126.1	5000.0	660.5
Արմավիրի մարզ										
Արմավիր	1	450.0	2200.0	2200.0	2200.0	15	14952.0	131.6	9090.9	1215.1
Բաղրամյան						4	4529.0	100.0	833.3	230.0
Վաղարշապատ						23	19452.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	2870.0	186.6	1084.3	623.5
Ճամբարակ						2	969.0	71.3	2286.2	148.1
Մարտունի						8	9570.0	119.3	5000.0	277.2
Սևան								240.0	3110.4	295.0
Վարդենիս						2	2548.0	72.5	987.2	150.0
Լոռու մարզ										
Այվերդի								114.3	1388.9	215.3
Գուգարք	3	1280.0	1972.2	2009.7	1997.2	1	160.0	77.9	14083.3	1042.5
Սպիտակ						14	16792.0	104.9	1348.3	204.2
Ստեփանավան						1	1530.0	88.2	1666.7	175.3
Տաշիր	1	56.0	436.3	436.3	436.3			45.3	400.0	89.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	1	510.0	4750.4	4750.4	4750.4	34	27232.1	264.5	35353.5	1960.0
Եղվարդ	5	3399.0	891.0	1292.0	1196.7	33	29040.0	173.6	27000.0	2840.0
Հրազդան	1	330.0	4976.4	4976.4	4976.4	4	5290.0	117.7	34848.5	1321.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	2	83.03	8000.0	8910.4	8455.2	6	4626.9	113.6	18750.0	331.7
Ամասիա								45.3	274.7	71.0
Անի	2	800.0	500.0	528.0	514.0			67.9	180.6	156.0
Աշոցք								40.8	144.0	62.0
Արթիկ	2	950.0	554.4	891.0	722.7	10	9450.0	111.8	5000.0	216.5

Սյունիքի մարզ										
Գորիս								112.2	1700.0	370.5
Կապան						1	590.0	67.9	2638.9	291.5
Մեղրի						1	1890.0	68.5	632.9	186.2
Սիսիան								123.5	875.0	190.2
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	570.0	750.9	750.9	750.9	6	6395.0	96.7	7659.6	498.4
Վայք								120.7	1448.3	198.2
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	109.0
Իջևան	4	2399.0	156.3	3000.0	1896.3	11	7056.0	74.1	14423.1	516.1
Նոյնմբերյան						1	250.0	125.0	1948.1	220.0

2011թ. նոյնմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 1 գործարք 0.12 հա մակերեսով, Լոռու մարզում:

2011թ. նոյնմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 646 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.8%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 89.3%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. նոյնմբերին, 2011թ. հոկտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 1.5%-ով, իսկ 2010թ. նոյնմբերի համեմատ՝ 25.0%-ով:

2011թ. նոյնմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 49 բնակարանների, 20 անհատական բնակելի տների, 341 հասարակական, 42 արտադրական նշանակության օբյեկտների, 187 միավոր /3693.55 հա/ հողերի և 7 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. նոյնմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 6 վարձակալության գործարքների /այդ թվում 2 միավոր՝ 0.003 հա, կառուցապատման իրավունքով/ քանակը 2011թ. հոկտեմբերի համեմատ նվազել է 40.0%-ով, իսկ 2010թ. նոյնմբերի համեմատ՝ 14.3%-ով: 2011թ. նոյնմբերին հանրապետությունում վարձակալված 3693.55 հա հողերից 0.64 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 3692.91 հա հողերից 54.19 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 0.43 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց Ձորի մարզում՝ 2392.06 հա, որից 2391.80 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. նոյնմբերին հանրապետության մարզերում վարձակալվել են 3592.53 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. նոյնմբերին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

Մարզի անվանումը	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	2	1.76
Արարատ	3	9.90
Արմավիր	9	9.08
Գեղարքունիք	8	5.54
Լոռի	9	137.67
Կոտայք	5	8.94
Շիրակ	1	0.24
Սյունիք	12	1020.14
Վայոց Ձոր	14	2391.80
Տավուշ	4	7.46
Ընդամենը	67	3592.53

2011թ. նոյեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2353 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.8%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. հոկտեմբերի համեմատ, աճել է 11.0%-ով, իսկ 2010թ. նոյեմբերի համեմատ՝ 3.8%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.4%/, առանձնատների /25.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /13.3%/ և հողերի /10.6%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1137 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. հոկտեմբերի համեմատ, աճել է 17.3%-ով, իսկ 2010թ. նոյեմբերի համեմատ՝ 19.7%-ով:

2011թ. նոյեմբերին հանրապետությունում գրավադրվել են 306.09 հա հողեր, որից 11.87 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 93.9%-ը կամ 287.47 հա գյուղատնտեսական նշանակության են, որից 0.10 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 147.57 հա, որից 146.80 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. նոյեմբերին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 241 գործարքներ, որից 191-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 83.4%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 12.0%-ն՝ անհատական բնակելի տների, 0.8ական%-ը՝ այգետնակների և հողերի, 04ական%-ը՝ արտադրական նշանակության օբյեկտների և ավտոտնակների, 2.1%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների նկատմամբ: 2011թ. հոկտեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 15.3%-ով, ընդ որում Երևանում աճել է 24.8%-ով, իսկ մարզերում միասին վերցրած նվազել՝ 10.7%-ով: 2010թ. նոյեմբերի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 52.5%-ով, ընդ որում Երևանում՝ 63.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 22.0%-ով:

2011թ. նոյեմբերին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման 5 /2-ական՝ Գեղարքունիքի և Սյունիքի, 1-ը՝ Արագածոտնի մարզերում/ գործարք է արձանագրվել, որի քանակը 2011թ. հոկտեմբերի և 2010թ. նոյեմբերի համեմատ աճել է 5.0 անգամ:

2011թ. նոյեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 3098 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2011թ. հոկտեմբերի համեմատ աճել է 7.5%-ով, իսկ 2010թ. նոյեմբերի համեմատ՝ 23.1%-ով: Առաջնային գրանցումների տնտեսարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 18.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /30.7%/:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե